ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ
ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԷՐԵԲՈՒՆԻ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԷՐԵԲՈՒՆԻ, ԽՈՐԵՆԱՑՈՒ Փ., մասնաշենք 162Ա)

ՈՐՈՇՈՒՄ
Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

ԵԴ2/0992/02/24 ք. Երևան
9 Փետրվարի 2024թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (այսուհետ՝ դատարան), նախագահությամբ դատավոր Արշակ Պետրոսյանի, ծանոթանալով «Ամայյա Գալոյան Լադիկի» Ա/Ձ-ի ընդդեմ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքապետարան» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ-ի՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ղեկավարի՝ Ա/Ձ «Ամայյա Գալոյանին» գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին լիազոր մարմին ներկայացրած 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 1953-Ա որոշումըանվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմումին.

ՊԱՐԶԵՑ

«Ամայյա Գալոյան Լադիկիե Ա/Ձ-ն դատարան է ներկայացրել հայցադիմում ընդդեմ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքապետարան» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ-ի՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ղեկավարի՝ Ա/Ձ «Ամայյա Գալոյանինե գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին լիազոր մարմին ներկայացրած 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 1953-Ա որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին: Հայցադիմումը ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 120-122 հոդվածների պահանջներին համապատասխան: Հայցադիմումի ընդունումը

մերժելու կամ հայցադիմումը վերադարձնելու հիմքեր չկան: Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124, 125, 199-200, 234.5 հոդվածի 2-րդ, 234.9-րդ հոդվածի 1-ին և 4-րդ հոդվածներով՝ Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. «Ամալյա Գալոյան Լադիկիե Ա/Ձ-ի ընդդեմ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքապետարան» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ-ի՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ղեկավարի՝ Ա/Ձ «Ամալյա Գալոյանին» գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին լիազոր մարմին ներկայացրած 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 1953-Ա որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմումն ընդունել վարույթ: 2. Որոշումը սահմանված կարգով ուղարկել գործին մասնակցող անձանց և ‘Գնումների մասին’ Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին: 3. Թիվ ԵԴ2/0992/02/24 քաղաքացիական գործով եզրափակիչ դատական ակտը հրապարակել ՀՀ դատական իշխանության պաշտոնական կայքում՝ 2024թ. մարտի 20-ին: 4. Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

Դատավոր՝ Արշակ Պետրոսյան

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am